ՇԱԽՄԱՏԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՄՐՑԱՇԱՐ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

20 հուլիսի, 2020 թ.

Կազմակերպիչներ.

Երևանի շախմատի ֆեդերացիա, Սփյուռքի գլխավոր հանձնակատարի գրասենյակ

Գործընկեր.

Մելգոնեան համաշխարհային նախաձեռնություն

Էլեկտրոնային ուսուցման գործընկեր.

ՀԲԸՄ Հայկական Վիրտուալ Համալսարան

Անցկացման վայր.

www.lichess.org շախմատային հարթակ

Մասնակիցներ.

Հայաստան, Արցախ, Սփյուռք

Մրցակարգ.

Արենայի մրցակարգ, 2 ժամ

Ժամակարգ.

3´+0´´ ամբողջ պարտիայի համար:

Մրցանակներ.

Մրցանակային հիմնադրամը կազմում է **520 000 ՀՀ դրամ (1$ ≈ 480 ՀՀ դրամ):**

Տեղ	Հիմնական	Կանանց	Մինչև 14 տ.	Մինչև 12 տ.	Մինչև 10 տ.	Մինչև 2000 վարկ. *	50+ վետերան	Հաջողակ մրցանակ
1-ին	50 000	40 000	25 000	20 000	15 000	25 000	25 000	64-րդ տեղ՝ 15 000
2-րդ	45 000	35 000						100-րդ տեղ՝ 10 000
3-րդ	40 000	30 000						
4-րդ	35 000							
5-րդ	30 000							
6-րդ	25 000							
7-րդ	20 000							
8-րդ	15 000							
9-րդ	10 000							
10-րդ	10 000							

*Միջազգային (ՖԻԴԵ) ստանդարտ վարկանիշ

Լրացուցիչ ցուցանիշներ.

Վերջնական աղյուսակը կկազմվի lichess.org կայքի օրենքներին համաձայն:

Հավասար միավորներ վաստակելու դեպքում մրցանակները չեն կիսվում և բաժանվում են՝ համաձայն մրցաշարային աղյուսակում գրված վերջնական տեղի: Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի ստանալու միայն մեկ մրցանակ՝ ավելի մեծը: Հատուկ և հիմնական մրցանակների հավասարության դեպքում մասնակցին կտրվի հիմնական մրցանակը:

Ժամանակացույց.

Մրցաշարը կսկսվի 2020թ. հուլիսի 20-ին, Երևանի ժամանակով՝ 20:20-ին և կտևի 2 ժամ:

Կոնտակտներ.

Մրցաշարի տնօրեն – ՄՎ/ՄՄ Նորայր Քալանթարյան

Համակարգող – ՖՎ Վահրամ Մեժլումյան

Մասնակցության պայմաններ.

Մրցաշարին բոլորի մուտքն ազատ է:

Յուցակագրման վերջնաժամկետն է հուլիսի 15-ը:

Մրցաշարի մասնակցության պայմաններն են.

- մրցաշարի անցկացման հարթակում (www.lichess.org) գրել նամակ համակարգողին https://lichess.org/@/muran29՝ ուղարկելով ՖԻԴԵ-ի անձնական համարը: Վերջինիս բացակայության դեպքում տրամադրել անձնական տվյալները (անուն, ազգանուն, ծննդյան տվյալներ, երկիր):
- ուղարկել հայտ https://lichess.org/team/panarmenian-chess-day թիմին՝ մրցաշարին միանալու համար:
- մրցաշարի վերջնական արդյունքները կամփոփվեն մրցաշարի ավարտից 48 ժամ անց՝ մասնակիցների կողմից «Արդարացի խաղ»-ի կանոնների պահպանման ստուգումից հետո:
- մրցաշարի կազմակերպիչներն իրավունք ունեն որակազրկել մրցանակակրին կայքի որոշմամբ կամ իրենց եզրահանգումներով՝ պարտիաների վերլուծության հիման վրա: